

Կարծիք

Սարգիս Բալդարյանի “Հայկական վաճառականական ձեռնարկները Նոր Ջուղայի առևտրական ցանցում” թեմայով թեկնածուական ատենախոսության մասին

Նոր Ջուղայի հայ վաճառականության պատմությունը հայ ժողովրդի պատմության փայլուն էջերից է, որի ուսումնասիրությամբ զբաղվել ու այսօր էլ զբաղվում են գիտնականներ աշխարհի տարբեր կողմերում: Ջուղահայ վաճառականության պատմության նկատմամբ մեծ հետաքրքրությունը պայմանավորված է 17-18-րդ դարերի համաշխարհային առևտրում նրա ունեցած կարևոր դերակատարությամբ ու նշանակությամբ: Նոր Ջուղայի և հայկական այլ վայրերից ծագող հայ վաճառականների հաջողությունները պայմանավորված էին ոչ միայն նրանց բնատուր խելքով, հակումներով և այլ արժանիքներով, կամ առավել ևս բնակության վայրով, քաղաքական և այլ հանգամանքներով, որոնք, իհարկե, կարևոր էին նրանց առևտրական հաջող գործունեության համար: Այս առումով ատենախոսությունը անդրադառնում է շատ կարևոր մի թեմայի, որը օգնում է ավելի խորքային ըմբռնել հայ վաճառականության հաջողությունների գաղտնիքը, և բացահայտում կրթության ու վաճառականական փորձի փոխանցման դերը այս հարցում:

Հեղինակն իր առջև նպատակ է դրել Կոստանդ Ջուղայեցու մատենագրական ժառանգության վերհանման միջոցով ուսումնասիրելու հայկական վաճառականական ձեռնարկները որպես Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցի հաջողությունը պայմանավորող գործոն:

Այդ նպատակով ատենախոսը համակողմանի հետազոտել է Կոստանդ Ջուղայեցու վաճառականական գործունեությունը, ապա նրա մատենագրական ժառանգությունը, աղբյուրագիտական քննության ենթարկել հեղինակի

վաճառականական ձեռնարկների կառուցվածքային բովանդակությունն ու ներառած հարցերի շրջանակը՝ համեմատելով դրանք իր ժամանակի եվրոպական առևտրական ձեռնարկների հետ:

Ատենախոսը լավատեղյակ լինելով վաղ արդի շրջանի համաշխարհային առևտրի խնդիրներին ու առևտրական դասագրքերին՝ դիտարկում է Կոստանդ Ջուդայեցու վաճառականական ձեռնարկները որպես հայ վաճառականների տեղեկատվության կարևոր աղբյուր, որը խիստ կարևոր գործոն էր հաջող առևտրի համար: Այս առումով գնահատելի է նաև հարուստ տեղեկատվական այն նյութը, որ բովանդակում է նրա “Աշխարհաժողովը” համաշխարհային առևտրի կենտրոնների մասին: Ատենախոսության մեջ քննվում են վաճառականական ձեռնարկներում ուսուցանվող վաճառականական էթիկայի նորմերը և կանոնները, որոնց հիման վրա էլ ձևավորվում էին հայ վաճառականի բարոյագիտական ընկալումները: Ընդ որում վաճառականական էթիկայի նորմերը հեղինակը դիտարկում է իր պատմական զարգացման մեջ համադրելով իրեն ժամանակակից եվրոպական նմանատիպ ձեռնարկներում ավանդված տեսակետների հետ:

Ատենախոսության մեջ հանգամանալից ներկայացված են Կոստանդ Ջուդայեցու նաև մյուս երկու ձեռնարկները, որոնք սերտորեն կապված են վաճառականական գործունեության հետ: Դրանք առևտրական թվաբանության հարցերը ներկայացնող “Արհեստ համարողության” և “Դոներն ռադամին” աշխատություններն են:

Ատենախոսին հաջողվել է բացահայտել Կոստանդ Ջուդայեցու ձեռնարկների դերը հայ վաճառականների կրթման ու դաստիարակման, առևտրական հմտություններին տիրապետելու գործում ոչ միայն Նոր Ջուդայում, որտեղ այս ուղղությամբ մեծ աշխատանք էր տանում նաև այդ ձեռնարկների հեղինակը, այլև առևտրական այնպիսի խոշոր կենտրոններում որպիսիք էին Կոստանդնուպոլիսը, Շամախին, Աստրախանը, Ագուլիսը և այլն, վայրեր որոնցում ընդօրինակվել են նրա

ձեռնարկները, ինչպես նաև օգտագործվել այլ վաճառականական ձեռնարկների ու աշխատությունների գրության համար:

Գովելի է ատենախոսի պրպտուն ուսումնասիրությունը հայերեն վաճառականական ձեռնարկների ձեռագրերի հայտնաբերման ու համեմատական հետազոտման հարցում, որի համար նա ներգրավել է ինչպես Երևանի, այնպես էլ Վենետիկի ու Վիեննայի Մատենադարաններում, Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում և Օքսֆորդի Բողլեյան գրադարանում պահվող ձեռագիր օրինակները:

Բացի այդ հետազոտողը օգտագործելով հարուստ աղբյուրագիտական նյութ և մասնագիտական գրականություն՝ կարողացել է ոչ միայն ճիշտ ըմբռնել բարդ լեզվաոճական առանձնահատկություններով բնորոշվող վաճառականական նյութը այլև հարուստ մեջբերումների և օրինակների ու դրանց իմաստային մեկնաբանությունների միջոցով ներկայացնել դրանց բովանդակային նշանակությունը: Ատենախոսության մեջ վաճառականական ձեռնարկների տեղեկատվական նյութի, մտքերի ու գաղափարների մեկնաբանությունները և վերլուծությունը, դրանց հիման վրա հեղինակի կատարած դատողություններն ու եզրահանգումները այն տպավորությունն են ստեղծում, որ հեղինակը հասցրել է աշխատանքի ընթացքում հմտանալ ու որոշ չափով տիրապետել վաճառականական բարդ և բազմալեզու բառապաշարին, ըմբռնել օգտագործվող եզրույթների և արտահայտությունների իմաստը: Այնպես, որ կատարված աշխատանքը վստահություն է ներշնչում, որ ատենախոսը ի վիճակի է և հաջողությամբ կարող է իրականացնել նաև ատենախոսության հիմնական նյութը հանդիսացող Կոստանդ Ջուղայեցու անտիպ գործերի քննական բնագրերի հրատարակությունը, որը պետք է լինի այս աշխատանքի տրամաբանական շարունակությունը:

Այնուամենայնիվ կուզենայինք նշել հետևյալը, որ ատենախոսությունը կշահեր եթե ունենար բառարան, որտեղ կբացատրվեին ձեռնարկներից կատարված

մեջբերումներում օգտագործված եզրույթներն ու օտար բառերը: Իհարկե, ստենախոսը հաճախ դրանք բացատրում ու վերլուծում է, սակայն ոչ ամբողջովին: Օրինակ, ստենախոսության մեջ բազմիցս օգտագործվում են դիանը (էջ 44), որը դինարն է, «մառչիլը» (էջ 28), որը եվրոպական արծաթ դրամն է, «եայդաշտ, ռուզլամայ, քաթա» (նշում, օրագիր, հաշիվ, հաշվեթուղթ) բառերը (էջ 71), անհասկանալի է օրինակ, թե ինչի մասին է խոսքը հետևյալ արտահայտություններում «Ֆարդ երեքի կանոնին» (էջ 45), «դախիլի պուրուպ» (էջ 75), «քուրայ կտան» (էջ 82), կամ ինչ է նշանակում «թեկլուկայ» բառը (էջ 82) և այլն:

Մեջբերումներում նշվող տեղանունները ևս հարկավոր էր փակագծերում նշել առավել ընդունված տարբերակներով, ինչպես օրինակ Բխարան (Բուխարա), Փշաւոր (Փիշավար), Քիշմիր (Քաշմիր) և այլն (էջ 75):

Ատենախոսը հանգամանալից հետազոտության է ենթարկել Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովը» և Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշոյ, թոյ և դրամից բոլոր աշխարհի» աշխատությունների բնագրերը, համեմատել դրանք: Ատենախոսի եզրահանգման համաձայն թեև վերջինս «իր երկի առանձին հատվածներում ակնհայտ կերպով օգտվել է Կոստանդ Ջուղայեցու երկից, սակայն ինքնուրույն և ընտրողական մոտեցում է ցուցաբերել փոխառված հատվածների նկատմամբ՝ ներառելով նաև առևտրական մեծաքանակ այլ տեղեկատվություն: Գնահատելով ստենախոսի մանրակրկիտ վերլուծությունը՝ հետևյալ դիտողությունն ունենք այս ենթավերնագրի տեղի կապակցությամբ:

Կարծում ենք կառուցվածքային առումով այս ենթավերնագիրը (1.4) շատ ավելի համապատասխան է երրորդ գլխի երկրորդ ենթավերնագրի հետևյալ բաժնին, որ վերնագրված է «Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների ազդեցությունը հայկական վաճառականական գրականության վրա» (էջ 109) և որտեղ ի դեպ ստենախոսը նորից է անդրադառնում դրանց Ղուկաս Վանանդեցու աղբյուր հանդիսանալուն:

Իսկ քանի որ այլ վաճառականական ձեռնարկներ առաջին գլխում չեն քննվում, այն կարելի էր նվիրել միայն Կոստանդ Ջուղայեցու գործունեության ու մատենագրական ժառանգության ուսումնասիրությանը:

Նշված դիտողությունները սակայն ամենևին չեն ստվերում այն մեծ ու արժեքավոր աշխատանքը, որը ատենախոսը կատարել է հայկական վաճառականական ձեռնարկները ուսումնասիրելու ուղղությամբ: Ատենախոսությունը լիովին համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, և ատենախոսը արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի

ավագ գիտաշխատող պ.գ.դ. Ք. Կոստիկյան